



Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐ-
ԺԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

Ի Յ Խ Դ Ի Թ Ե Տ Ա Ր Ի Թ

ՀԱՄԱՐ Է Ն Ն Ե Ր Ո Ր Գ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1895 Թ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

«Նդիցին գօտիք ձեր անդեալ ընդ մէջս
և ճրագունք լուցեալք, և զուր նմանողք
մարդկան, որ ակն ունիցին Տեառն իւր-
եանց թէ նրբ դառնայցէ ի հարսանեաց-
գի յոգժամ գայցէ և քաղիցէ, վաղվա-
ղակի քանայցեն նմա»:

Հով. ԺԲ. 55-56:

Մի անգամ Փրկչի մօտ եկաւ մի հա-
րուստ մարդ հարցնելու, թէ ի՞նչ
պէտք է անել, որ յաւիտեական կեանք ժա-
ռանգէ: Փրկչը յիշեցրեց նորան իւր հայրե-
նի օրէնքները՝ տասնաբանեայ պատուիրաննե-
րը: Բայց նա պատասխանեց թէ այդ ամէնը
մանկութիւնից ի վեր կատարել է և զգում
է, որ դեռ մի բան պակաս է, զգում է (ե-
րեւի կուզէր ասել, որ այդ պատուիրանները

միայն պահելով այն կեանքին չի կարելի հա-
նել, ինչ կեանքի մասին ինքը Յիսուսն էր
խօսում): «Եւ Յիսուս հայեցեալ ի նա՝ սիր-
եաց զնա» ասած է. «Նա տեսաւ, որ այդ
մարդը յիշաւ անկեղծ սրտով ցանկանում էր
առաքինի կեանք վարել և երանաւէտ վիճա-
կի համար նախապատրաստուել և ցոյց տը-
ուաւ այդ նոր կեանքի խակական ճանապարհը:
արհամարհել և քննադատել ստացուածքը մեքա-
ւորների օգտին համար զործ զնել և երկնա-
ւորի համար միայն ապրել: Սակայն այդ պա-
հանջն անիրագործելի թուեցաւ ոչ միայն իւր
ունեցուածքի հետ հոգւով սրտով կապուած,
ուստի և աւետարանի ողին ըմբռնելու անըն-

դունակ հարուստին այլ նաև Հիսուսի սեփական աշակերտներին որոնք ամեն ինչ թողել խաչն առել և Վորա ետևից էին զնացել։ Բոլոր մարդիկ մտածում էին նոքա առելի կամ պակաս չափով կապուած են իրենց ստացուածքի հետ նորա մէջ են տեսնում իրենց կեանքի ապահովութիւնը և մօտիկ ապագայի յոյսը։ Եթէ Եստուծոյ արքայութիւն մտնելու կեանք ունենալու համար անհրաժեշտ է զրկել իրեն արդէն ձեռքն ունեցած հարստութիւնից, ներկայ ապահով կեանքից՝ քանի՞ մարդ կգտնուի որ յօժարի այդ անելուն կմնայ կենդանի այդ պայմանների մէջ։ Ընդ որ նոյն իսկ իրենց առաքեալների համար սիրելի էր դեռ երկրաւոր հարստութիւնը մի աչքով դեռ միշտ զէպի յետ էին նայում նոքա և պատրաստ էին ամէն քայլափոխում տեղի տալ իրենց աշխարհային ձգտումներին։ Ո՞վ կար ուրեմն ուրիշ որ այդպիսի զոհաբերութիւն յանձն առնել կարողանար։ Ո՞չ որ չկայ պատասխանում է Փրկիչը։ մի տխուր հայեացք է ձգում նա իւր առջև կանգնածների վերայ և ասում։ Բողոքեալ մարդու կողմից անսպասելի մարդկային տեսակետով անհնարին բան է դա։ քանի մարդ նիւթեղէն աշխարհի մէջ է ապրում նիւթական կեանքով՝ նիւթից բոլորովին կտրուել նա չէ կարող։ եթէ արտաքուստ ցոյց տայ մինչև իսկ թէ կտրուած է, թողնէ ամէն բան և անապատ քաշուի այնուամենայնիւ կապուած կմնայ նիւթեղէն աշխարհի հետ՝ նիւթական ձգտումներով։ Սիայն Եստուած է, որ այդ անհնարինը հնարաւոր դարձնել կարող է, իւր աստուածային հոգեւոր կեանքին հաղորդակից անելով մարդուն, սովորեցնելով նիւթականի վերայ աստուածային տեսակետից նայելու հոգւոյ աչքով։ յաւիտենական հոգեւոր բարեաց մօտ անցողական նիւթեղէնի ոչնչութիւնը տեսնելու։

Եսօր իսկ քրիստոնեայ անունը կրողների մեծ մասը աւետարանի շատ պատուէրներ անգործադրելի է համարում։ Ինչպէս կարելի է, ասում են նոքա, որ ազնիւ և իւր պատիւը

ճանաչող մարդը մի երեսին ապտակ ընդունելուց յետոյ միւսը դարձնէ, իւր շապիկը պահանջողին բաձկոնն էլ տայ թշնամուն սիրէ, անխնայ օրհնէ, առանց որ և է օգուտ ըստ պատելու իւր զոյքը, իւր անձը ընկերի համար զոհէ և ամէն մի ծշմարտ քրիստոնեայ որ աւետարանի հոգւով է ապրում որ զգացել է միանգամ Քրիստոսի լուծի քաղցրութիւնը, պէտք է նոյն պատասխանը տայ այդ հորցերին ինչ որ ինքը երկնաւոր վարդապետը բնական մարդու համար՝ մարդկային տեսակետով անհնարին է այդ քրիստոնեայ մարդու համար աստուածային տեսակետով հնարաւոր։

Այլ երև յառաջ բերած խօսքերը բովանդակում են սակայն մի պատուէր, որի զիմաց տկար են զգացել իրենց քրիստոնէական առաքինութեան ամենամեծ հերոսներն անգամ։ Եկեղեցու պատմութիւնը կարող է հազարաւոր սրբերի անուններ տալ որոնց համար աշխարհի փառքն ու հարստութիւնը մի կտրած ապակու զին չէ ունեցել, որոնք խոնարհութեան և անկիշաչարութեան ամենակենդանի օրինակներ են բնծայել, զաղափարի համար զոհ են բերել իրենց անձն ու ստացուածքը, առանց մտածելու մինչև իսկ թէ գովեստի ու վարձատրութեան արժանի գործ են կատարում։ Եւ իսկապէս ամէն քրիստոնեայ ընդունակ է առանձին առանձին առաքինական գործերի ամէնքը կարող են ցոյց տալ իրենց կեանքի մէջ մի վայրկեան, երբ նոքա բարի են եղել և հեղ, սիրով և զթութեամբ են վերաբերուել զէպի ընկերը և դէպի թըշնամին, զիմացել են ամենազայթակեղեցիլ փորձութիւնների, պատրաստ են եղել հերոսական անձնագոհութեան, բայց բարի և առաքինի լինել ամբողջ կեանքում ամէն մի լուպէ, միշտ կատարած ունենալ պարտաճանաչութեան ու արիւթեան դօտին և երբեք չքեալ, միշտ վառ պահել հոգու ու սրտի ճրարադր, և երբեք խաւար՝ ահա թէ ի՞նչն է դժուար ու անտանելի մարդկային բնութեան համար, ի՞նչն է, որ իւր բոլոր լուծեամբ իւր

բազործելու ձեռնհաս չէ եղել ոչ մէկը Տիրոջ ծառաներից (բայց եթէ նա միայն որ Տէրն էր և ծառայի կոչում յաճն առաւ) և որին սակայն ամէնքը ձգտել պարտաւոր են։ Արք Պետրոս առաքեալը Տիրոջ հարցրեց, թէ արդեօք այդ առաքեալը խօսքերը առաքեալներին էին միայն ուղղուած, թէ բոլոր ժողովրդին—ընդունելով անշուշտ որ այդպիսի մեծ հաւատարմութիւն առ առաւելն միայն Նորա ամենամերձաւոր սպասաւորներից սպասել կարելի էր—Տէրը իւր պատասխանով հասկացնել կամեցաւ, որ Նա արտաքին յարաբերութիւնների վերայ ամենեւին ուշադրութիւն չէ դարձնում, որ Աստուծոյ տանը անտես լինել և իւր ցոյց տուած հաւատարմութեան համար վարձ ստանալ ամէն ոք կարող է։ Այժմ մէկը զգում է, որ իւր վերայ աւելի մեծ պարտականութիւն կայ, հետամուտ թող լինի աւելի մեծ արդիւնք յառաջ բերելու։ Բայց մի որոշ պարտականութիւն ամէնքն ունին, ամէնքը պարտաւոր են Տիրոջ կամքը ճշդիւ կատարել և պատասխանատու կմնան, եթէ զանցառու դնուին։ Արձ և պատիժ այստեղ մարդոց աշխատի մէջ ունեցած դիրքի կամ կոչման համեմատ չէ չափուում, այլ այն դիտակցութեան համեմատ, որ մէկն իւր պարտականութիւնների մասին ունի և այն հաւատարմութեան համեմատ, որով նա վերաբերուել է կեանքի ամէն մի քայլափոխում դէպի իւր ընտանական պարտքերը։

Անէք այնպիսի մի բազդախնդիր ժամանակի մէջ ենք ապրում, երբ հաւատարիմ անտեսութիւնն ու մանրաքնին պարտաճանաչութիւնը մեծ յարգ չունին մարդոց աչքում։ Երիտասարդ սերունդը նպատակին հասնել ձգտում է ոչ թէ տոկուն աշխատանքով իւր կրքերի, իւր ամէն մի շարժման վերայ արթնութեամբ հսկելով և դէպի բարին ուղղելով, այլ արտաքին դիւթական միջոցներով, դադափարական թռիչքներով մի անզամից, առանց նեղութեան, առանց իւր անձը ամենաթեթեւ հաճոյքներից զրկելու։ Եւ եթէ այնչափ հազուադիւս են մեր մէջ խելագէս առա-

քնի անձնաւորութիւններ և հաւանականաբար աւելի հազուադիւս պիտի լինին մօտիկ ապագայում՝ դորա պիտաւոր պատճառներից մէկն անշուշտ զգաստութեան պարտքի զգացման պակասութիւնն է։ Այժմի հմտութիւն և ոչ մի ունակութիւն առանց երկարատեւ աշխատանքի ու փորձերի ձեռք չի բերուում առաքելութիւնն էլ մի ունակութիւն է, որի համար անընդհատ մաքառում պէտք է ներքին վատ բնազդութեան դէմ, զգաստութեան գօտին միշտ կապած պահել պէտք է։ Վժուարին է այդ ճանապարհը և փշալից, բայց միակն է, որ դէպի կեանք է տանում միակն է, որ յարգանքի ու պատուոյ արժանի անձնաւորութիւններ է պատրաստում։

Այդպիսի անձնաւորութիւնների պէտքը նոյնքան աւելի մեծ է այժմ, որքան աւելի հուժկու ձայնով դժբաղդ պարագաներ դէպի արթնութիւն և դէպի պարտաճանաչութիւն են հրաւիրում մեզ։ Երգարագատ Տէրը ինչպէս ամէն մի անհատի, այնպէս նաև ընդհանրութեան համար իւրաքանչիւր բոպէ, բոլորովին չակրնկալած ժամուն, յաւիտենական երանութեան կայաններից յայտնուիլ կարող է. քաջագօտի և հաւատարիմ ծառաներ են պէտք, որ ճրագները վառած դիմացն երնեն և կարողանան փութով մի դուռ բանալ Նորա առաջ։ Ահա ուսումնարանական մի նոր տարի է սկսուում։ Երանի՜ նպաստէ նա այդպիսի հաւատարիմների թիւը բազմապատկելու մեր մէջ. ուսուցիչ և աշակերտ պարտաճանաչութեան և զգաստութեան գօտին կապած աշխատեն անսպառ նիւթ ժողովել իրենց ճրագների մէջ, դէպի յաւիտենականութեան դռներն առաջնորդող լուսոյ աղբիւրից։

Կ. Վ.



ՍՈՆՐԲ ԽԱԶԸ.

«Ի՞նչ ուս նշան սեռն և անապակ Աստուծոյ առ մարդիկ սիրոյն ... և այնչափ Աստուած դմարդիկ սիրեաց, մինչև զՍրբին իւր Միածին ետ, և յայսմիկ երեւեցաւ սէր նո».